«ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ», *հոդվածների ժողովածու, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 357 էջ։*

Դարերի ձիգ ճանապարհ անցած հայ գրականության սովետական հատվածը նրա ոսկե շղթայի ամենափայլուն օղակներից է։ Հայ գրականության բնորոշ առանձնահատկություններից մեկը՝ ժամանակի անցուդարձերին անհապաղ, անմիջական, իբրև սեփական ցավի կամ ուրախության արձագանքելու կարողությունը յավագույնս ժառանգած սովետահայ գրականությունը այսօր դուրս է եկել միութենական յայն տսպարեզ, զառնտլով գրականագիտական ամենալուրջ խորհրդածությունների առարկա։ Այս տեսակետից Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած ներկա ժողովածուն ամրողջական պատկերացում է տալիս սովետահայ գրականության 60-ամյա ուղու մասին, շնորհիվ թե՛ ժամանակագրական-թեմատիկ լայն շրջանակների, թե՛, իհարկե, մի շարք լակտն պրոբլեմների ընդգրկման։ Ժողովածուում զետեղված հոդվածները ներկայացնում են սովետահայ գրականության անցած ճանապարհի մի քանի բնորոշ կողմերը. սովետահայ գրականության պատմության հետազոտության արդյունքներն ու խնդիրները, 20-ական թվականների գրական շարժման տեսական-ծրագրային հարցերը, սովետական գրողների առաջին համագումարի հետ կապված հայ գրականության խնդիրները, գրական ավանդույթների յուրացման առանձնահատկությունները, նոր հերոսի կերպարի ձևավորման և զարգացման հասարակական ու բարոյական նախադրյալները, 20—30-ական թվականների սովետահայ վեպի կոնֆլիկտը, ժամանակակից արձակի և պոեզիայի տիպաբանական ու հոգեբանական քննությունը, արդի հայ արձակի գեղարվեստական առանձնահատկություններն ու ընդհանրությունները սովետական գրականության համապատկերում, հայ դասականների երկերի հրատարակության գործը, ափյուռքահայ առաջադիմական գրականության պատմության հիմնական էջերը։ Արծարծվող խնդիրների այս ընդարձակ շրջանակը ամենևին չի խանգարել ժողովածուի կառուցվածքի միասնականությանը։

Ընդհանուր կոնցեպցիան, որ ձուլ կապ է ստեղծում գրեթե բոլոր հոդվածների միջև, գրականության անցյալի ու ներկայի օրգանական ամբողջականության ըմբռնումն է։ Սովետահայ գրականության առաջին փուլերի այս կամ այն խնդիրներին նվիրված Դ. Դասպարյանի «1920-ական թվականների գրական շարժումը», Ս. Ամիրյանի «Հայ գրականությունը ռուս քննադատության գնահատմամբ», Մ. Բողոսյանի «Հայ գրականությունը սովետական գրողների առաջին համամիութենական հանդեսում», Ն. Ադալյանի «Նոր հերոսի կերպարի ձևավորումը» հոդվածները ժամանակի երևույթների գրապատմական պրոցեսի գնահատականից բացի, զատում-շեշտադրում են սովետահայ գրականության մնայուն, զարգացման անընդհատությունը որոշարկող արժեքները։ Է. Ջրբաշյանի «Ավանդույթի նորոգված զգացումը» հոդվածում արդեն, ուր 30-ական թվականների պոեզիայում հանդես եկած անցյալի գրական կերպարների վերլուծությամբ վեր է հանվում քննարկված մի շարք գործերի և՛ գրական-պատմական, և՛ գեղագիտական նշանակությունը սովետահայ գրականության պատմության մեջ, գրականության պատմության փորձի ու արդիական խնդիրների փոխկապվածությունը ընկալվում է իբրև գեղարվեստական շարժման անխուսափելի գործոն։

Նմանատիպ հարցադրումը Վ. Մնացականյանի «Ժամանակը և նրա հերոսը պոեզիայում» հոդվածում արծարծվում է առհասարակ ժամանակի հերոսի անցած ուղու նկատմամբ։ Հեղինակը, իհարկե, ձեռնպահ է մնացել բարդ՝ու բազմաշերտ այդ երևույթի քիչ թե շատ սպառիչ քննությունից։ Նա պրոբլեմն առաջադրել է՝ հետամուտ լինելով դրա պատմական զարգացման միայն մի քանի միտումներին, ունենալով. ինչպես ինքն է նշում. «...այս համոզմունքը, որ նոր հերոսը ոչ թե պատմությունից վեր և պատմություն չստեղծող ինչ-որ չեղած անհատ է, այլ, առաջին հերթին, բարձր գաղափարայնության չափանիշ և ժամանակի առաջընթացը պայմանավորող կենսական հակասությունների խտացում, միաժամանակ նույն ժամանակի ճշմարտությունը մարմնավորող ու հաստատող ուժ» (էջ 152)։ Խոսքի՝ գիտական-հրապարա-

կախոսական ոճին հատուկ կրքոտությամբ հոդվածագիրը բացահայտում է գրական հերոսի ասպարեզ գալու հասարակական-բարոյական սոդդակները, զարգացնում այն միտքը, որ հայ մեծ բանաստեղծները, սկսած XIX դ., կատարել են յուրօրինակ սխրանք, քանի որ նրանցից և ո՞չ մեկը հասարակական անտարբերություն չի ցուցաբերել իր ժողովրդի և մարդկության ճակատագրի նկատմամբ, ավելին, հակառակ ազգային պատմությանը պատուհասված մշտատև և դաժան անցուդարձերի, նրանք իրենց պոեզիայում ավելի ու ավելի են ուժեղացրել, խորացրել հումանիստական ձգտումները։ Այդ վեհ ձգտումների արժանի ժառանգորդը եղավ սովետահայ պոեզիան։

Հումանիզմի արդեն մերօրյա դրսևորման մասին խոսք է գնում նաև ժամանակակից արձակին նվիրված հոդվածներում։ Ե. Ալեքսանյանի «Արձակի զարգացման նոր միտումները» ուսումնասիրության մեջ, մասնավորապես Հ. Մաթևոսյանի ստեղծագործության բարոյափիլիսոփայական խնդիրների քննությամբ, ընդգծվում է գրողի մարդասիրության այն նոր որակը, որ արժանիորեն տեղ է գրավել սովետական արդի արձակի մեջ ընդհանրապես։ Թեև Ե. Ալեքսանյանը հոդվածում, հասկանալի պատճառներով, կանգ չի առել արդի գրական պրոցեսի աչքի ընկնող բոլոր երևույթների վրա, այդուհանդերձ, նա ի ցույց է հանել սովետահայ գրականության զարգացման նոր միտումները, որոնք հետաքրքրական են թե՛ իրենց ազգային-ինքնատիպ էությամբ, թե՛ համամիութենական պրոցեսի հետ ունեցած հարաբերակցությամբ։ Հետազոտողն այն ուշագրավ հետևության է գալիս, թե «բնարական-փիլիսոփայական, հոգեբանական արձակը, առավելապես նրա գեղարվեստական արտացոլման քնարէպիկական ձևերը, կազմում են, թերևս, ամենից ավելի հաջող զարգացող ուղղությունը ժամանակակից հայ գրականության մեջ» (էջ 277)։

Արդի արձակը մի այլ տեսանկյունից է դիտարկում Զ. Ավետիսյանը «Գրական կերպարի հոգեբանությունը» հոդվածում։ Առաջադրվող խնդիրը քննելիս նա առանձնացրել է երեք հիմնական շերտ. սոցիալական հարաբերություններով պայմանավորված հասարակական հոգեբանության ընդհանուր գծեր, մարդ-անհատի սուբյեկտիվ-ինքնուրույն դրսևորումներ և կերպարի ազգային բնավորության ու հոգեբանության առանձնահատկություններ։ Գրական կերպարի հոգեբանական կառուցվածքի գիտական ուսումնասիրությունը մինչև վերջերս մեր գրականագիտության համեմատաբար խոպան տեղամասերից էր, և այս իմաստով Զ. Ավետիսյանի ուսումնասիրությունը՝ խարսխված տեսական հստակ չափանիշներին, քննության նյութ դարձած կոնկրետ երկերի գրական հերոսների հոգեբանության ենթաշերտերի նուրբ դիտարկումներով, ժողովածուի ամենահետաքրքիր էջերից է։

Տեսական-գրականագիտական նորագույն նվաճումների հմուտ կիրառմամբ է գրված Հ. Մարդարյանի «Սովետահայ վեպի կոնֆլիկտը» ուսումնասիրությունը։ Պրոբլեմի քննության ժամանակագրական եզրերը սահմանափակված են 20—30-ական թվականներով, բայց հոդվածագիրն ըստ էության նոր կողմերով է բացահայտում այդ շրջանի հանրահայտ վեպերի ինչպես տիպարանական-կառուցվածքային, այնպես էլ դրանց հետ սերտորեն կապված գեղարվեստական-գաղափարական առանձնահատկությունները։ Դա հատկապես վերաբերում է Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի՝ որպես ողբերգաերգիծական քաղաքական երկի, քննությանը, ուր հոդվածագիրը հստակ վերլուծումներով ցույց է տալիս, որ, ի տարբերություն նախորդ շրջանի մեր վեպի, չարենցյան «...կոնֆլիկտավորման հիմնական ելակետը պատկերման ու հակապատկերման սկզբունքը չէ, այլ գեղարվեստական տվյալ պատկերի ինքնաշարժման ներքին բարդ ու հակասական ուժերի հայտնաբերումն ու մարմնավորումը» (էջ 232)։

Գ. Հակոբյանի «Սովետահայ բնագրագիտության անցած ճանապարհը» և Գ. Սևանի «Սփյուռքահայ առաջադիմական գրականության 60 տարին» հոդվածները իրենց հանրագումարային բնույթով հանդերձ, նույնպես կապվում են գրական պրոցեսի ընթացիկ խնդիրներին։ Առաջինը հայ դասական գրողների հրատարակության գործ գիտական-կազմակերպական ժամանակակից մակարդակի վրա դնելու պահանջից զատ, առաջադրում է նաև այն իրագործելու հիմնական սկզբունքները։ Երկրորդը անդրադառնալով սփյուռքահայ գրականության անցած նանապարհի ամենաէական հարցերին, այդ գրականության հետագա ճակատագիրը ավելի անմիջականորեն է կապում Սովետական Հայաստանի իրականությանն ու մայր հողի վրա արմատներն անընդհատ խորացնող գեղարվեստական ընդհանուր գործընթացին։

Գրախոսվող ժողովածուի հոդվածների ոչ լրիվ դիտարկումից իսկ երևում է, թե արդի գրականագիտությանը ի՞նչ բազմապլան խնդիրներ է առաջադրում սովետահայ գրականության պատմությունը։ Վերջինիս հետազոտության արդյունքներին ու խնդիրներին է անդրադարձել

Ս. Աղաբաբյանը։ Նրա հոդվածը հակիրճ ձևակերպումներով գիտական ստույգ, համոզիչ պատկերացում է տալիս հայ սովետական գրականության պատմության հետազոտության ամենահիմնական նվաճումների ու անելիքների մասին։ Հոդվածագիրն առաջադրում է այնպիսի խնդիրներ, որոնք կա՛մ ցարդ ուսումնասիրված են ոչ բավարար գրական լուսանիշներով, կա՛մ պարզապես դուրս են մնացել մեր գրականագիտության տեսադաշտից։ Դրանցից կարևորագույններն են՝ սոցիալիստական ռեալիզմի առաջացման, կազմավորման և զարգացման օրինաչափությունների, սովետահայ գրականության աղգային դիմագծի ու ազգային հիմքերի, գեղարվեստական արժեքների փոխադարձ ազդեցության և հարստացման պրոցեսի, գրականագիտության նորագույն ուղղությունների կիրառման հետ կապված հարցերի ուսումնասիրությունը։ Ս. Աղաբաբյանը ոչ միայն առաջադրում է այդ խնդիրները, այլև տալիս է դրանց լուծման տեսական-մեթոդաբանական մի շարք ելակետեր։

«Գրականությունը և ժամանակը» գրքում զետեղված հոդվածների պրոբլեմային բնույթը, խնդիրների արծարծման գրականագիտական պատշաճ մակարդակն ինքնին հուշում են նմանատիպ ժողովածուների պարբերական հրատարակման անհրաժեշտությունը, ինչը էականորեն կարող է նպաստել արդի գրական պրոցեսի առաջընթացին։

ՀԵՆՐԻԿ ԴԱԼՍՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

«ИСКУССТВО СОВЕТСКОЙ АРМЕНИИ ЗА 60 ЛЕТ». Составитель-редактор Г. Ш. Геодакян, изд-во АН Арм. ССР, Ереван, 1980, 150 с.

Вышла в свет книга «Искусство Советской Армении за 60 лет», подготовленная Институтом искусств АН Армянской ССР. Это—сборник очерков, посвященных армянскому театру, кино, музыке, изобразительному искусству, градостроительству и архитектуре. Разумеется, появление такого труда к юбилею республики вполне закономерно.

Очерки предваряет краткое вступление составителя, где говорится о цели книги—«дать общее представление о достижениях армянского советского искусства, рассказать о наиболее ярких художественных явлениях и тех процессах, которые имели определяющее значение в становлении и развитии новой художественной культуры Армении» (с. 5).

Задача обобщения опыта искусства, его исторического пути, особенно если это касается советского искусства, характерезующегося стремительными темпами развития, всегда в достаточной степени сложна. И надо сказать, что в пределах, определенных предварительными замечаниями составителя, задача эта представляется выполненной. Пусть не все помещенные в сборнике очерки в равной мере аналитичны, но в целом они дают читателю довольно ясное представление о предмете разговора. Научная же ценность очерков главным образом состоит в том, что многие заключенные в них положения, как и богатый фактический материал, в дальнейшем могут послужить серьезным подспорьем для будущих авторов фундаментальной истории искусства Советской Армении.

Уже первый очерк, посвященный театру (автор Л. Ахвердян), дает богатую пищу для размышлений о путях развития нашего сценического искусства. Весь сложный, противоречивый путь развития армянского советского театра—от постановки «Потонувшего колокола» Г. Гауптмана, одного из выдающихся достижений Первого гостеатра на начальном этапе его деятельности, до «Кориолана» Шекспира, последнего наиболее значительного спектакля театра имени Г. Сундукяна,—прослежен в очерке под углом зрения осуществления синтеза двух начал театрального искусства—постановочного и актерского. Так, о первом периоде автор пишет: «Каким бы ни было противоборство, возникшее в армянском театре между постановщиком и актером, результатом явилось то, что были созданы первоклассные спектакли, успех которых определяли не только оригинальные режиссерские замыслы, но и актерские исполнения. Не имели бы никакой цены да-